13. 10. 2023

No 01/01-1230

ՈՐՈՇՈՒՄ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտորի «Նոլինա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Նոլինա» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 25.07.2023թ. կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ՄՀՀ-1 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), որի շրջանակներում Ընկերությունը պետք է մինչև 2023թվականի սեպտեմբերի 2-ը մատակարարեր Մուտքի հսկողական համակարգ (դեմք, ձեռքի ափ և քարտ կարդացող սարք՝ իր կանգնակով դրսի և ներսի) - 19 հատ: Սակայն 2023թվականի օգոստոսի 24-ին Ընկերությունը գրություն է ներկայացրել առաջարկելով մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրացույցային օրով, սակայն Պատվիրատուն մատակարարման ժամկետը երկարացրել է 10 օրացույցային օրով, որի հիման վրա 2023թվականի օգոստոսի 28-ին կնքվել է համաձայնագիր, ըստ որի մատակարարման վերջնաժամկետը է սահմանվել 2023թվականի սեպտեմբերի 12-ը: Համաձայն Պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծել է պայմանագիրը:

«Նոլինա» ՍՊԸ-ն չի կատարարել պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը, մասնակցի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը ինչպես նաև «Նոլինա» ՍՊ ընկերությունը առաջարկված ժամկետում չի վճարել պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման տուժանքները: Հիմք ընդունելով վերոգրյալի և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը և 6- րդ հոդվածի 2-րդ մասը

ՈՐՈՇԵՑԻ

1. «Նոլինա» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Սույն որոշման օրինակն ուղարկել մասնակցին և ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ռեկտոր՝ **Դ. Գալոյան**